

ԿԻԼԻԿԻՈ ՀԵԹՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱՎՈՐԸ ԵՎ ԻՐ ԵՐԿԼԵԶՎՅԱՆ ԴՐԱՄՆԵՐԸ



ին Կիլիկիո քաղաքական փառքը կպարփակե Լևոն Բ.ի, Հեթում Ա.ի և Լևոն Գ.ի թագավորությանց շքրչանքը:

Լևոն Բ. Մեծագործ թագավորին դստեր՝ Զաբել թագուհիին առաջին կողակցին՝ Փիլիպոս թագավորին (1222—1225) գահընկեցութենեն հետո, Կիլիկիո մեջ թագավորեց Հեթում Ա., Կոստանդին Պալլի արժանընտիր և եռանդուն որդին, որ 1226-են մինչև 1270 թվականները իշխեց իր ընդարձակված հայկական պետության վրա, որ իր փառքի շքրչանին ունեւր մոտավորապես երեք միլիոն բնակչություն: Պետության մայրաքաղաքն էր Սիս, որ ունեւր գրեթե 500.000 բնակչություն:

Հեթում Ա.են առաջ դրացի Սելջուկյան հզոր կայսրության վեհապետն էր սուլթան Ալաէդդին Կալկոբադ Ա., որ Փիլիպոս թագավորին օրով հափշտակած էր Իսաւրիան ու քանի մը մեծ քերդեր: Հեթում Ա., փրք քաղաքական նշանավոր կազմակերպիչ, փափագած էր դրացի օտար պետություններուն հետ հաշտարար կյանք վարել և այս պատճառով բարեկամական առաջին դաշինքը կնքեց հայոց թշնամի Իգոնիո սելջուկյան սուլթանին հետ: Այս առիթով Սիսի մեջ պատրաստվեցան երկլեզվյան՝ հայերեն ու արաբերեն տառերով արժաթ դրամներ, որոնց մեկ կողմին վրա կնշմարվի Հեթում Ա.ի պատկերը հայերեն տառերով, իսկ մյուս կողմին վրա կնշմարվի սելջուկյան սուլթանին անունը և մականգիրը արաբերեն տառերով:

Հայ և սելջուկյան բարեկամությունը տեւեկեց միայն 17 տարի, այսինքն հասկանաբար 1226-են մինչև 1243 թվականը, երբ երկլեզվյան երկրորդ դրամը տպվեցավ Սիսի մեջ

Հեթումի և Ալաէդդինի հաջորդող՝ Ղայասէդդինի անուններով:

Հեթում Ա., սելջուկները լքելով, թաթարներու հետ առաջին բարեկամական դաշինքը կնքեց 1244-ին: Այդ թվականեն վերջ սելջուկյան պետությունը սկսավ տկարանալ, իսկ հայ և թաթար նոր դաշնակցության շնորհիվ, հայկական թագավորությունը հետզհետե զորացավ: Հայ և թաթար միացյալ բանակը մեկ կողմեն հասավ Կարին, Նրզնկա, Կեսարիա, Սեբաստիա և Իգոնիա, և մյուս կողմեն գրավեց Բաղդադ, Բերիա, Խառան, Նոնսիա, Ամիդ ու Դամասկոս քաղաքները: Հայկական բանակը ունեւր 52.000 զինվոր Հեթում Ա.ի սպարապետության ներքե, իսկ թաթարական ընդհանուր բանակին սպարապետն էր քաջ ու հայասեր Հուլավուն իշխանը, որ եղբայրն էր թաթարներու Մեծ Խանին:

Ընդհանուր արշավանքեն առաջ, 1247-ին, Իգոնիո Ղայասէդդին սուլթանը, կամբոնի ապստամբ Կոստանդին իշխանին հետ միանալով, հարձակած էր Հեթում Ա.ի վրա, բայց սպանված: Իրմե երեք տարի վերջ սպանվեցավ նաև ապստամբ Կոստանդինը:

Սելջուկները ունեին քանի մը պետություններ ու բաժնված էին քանի մը ճյուղերու, որոնց գլխավորներն էին Իրանի, Հայեպի, Խորեզմի, Դամասկոսի և Իգոնիո սուլթանությունները:

Այս պետությունները երբեմն իրարու հակառակ էին, ինչպես որ Իգոնիո սուլթան Ալաէդդինը անգամ մը հայոց Հեթում թագավորին հետ դաշնակցելով, պատերազմած էր Խորեզմի սուլթան Զեյալէդդինի դեմ:

Հեթումի երկլեզվյան դրամները աղերս ունին միայն Իգոնիո Սելջուկյան պետության հետ, ու կարծես լուսաբանություն մը տալ այս պետության մասին:

Սեւջուկյան այս հզոր թագավարությունը տևած էր 230 տարի, 1077-են մինչև 1307: Մայրաքաղաքն էր ընդհանրապես Իգոնիա (Գոնիա), բայց երբեմն պետություն կեդրոն եղած էին նաև Սեբաստիա ու Կեսարիա քաղաքները:

Իգոնիո Սեւջուկյան պետությունը պատմության ծանոթ է «Ռումի» անունով, որովհետև իր սահմաններուն մեջ կայարփակեք Փոքր Ասիո այն երկիրները, որոնք նախապես Կոստանդնուպոլսո հույն կայսեր կպատկանեին:

Իգոնիո սուլթաններուն դրամները ընդհանրապես կտպվեին Սեբաստիո, Երզնկայի և Մելիտինեի փողերանոցներուն մեջ, բայց հայկական երկլեզվյան դրամները կտպվեին Սիս մայրաքաղաքին մեջ, ու կնեղկայացնեին մեկ հայ ու երկու սելջուկ թագավորներ, որոնք հետևյալներն էին. Հայոց Հեթում Ա. թագավորը (1226—1270) ու սելջուկյան Ալաէդդին Կայկոբադ Ա. (1219—1236) և Ղայասէդդին Կայխոսրեվ Բ. (1236—1245) սուլթանները:

Երկու սուլթանները գործ ունեցած էին հայոց հետ: Առաջինը աշխարհակալ էր ու գրաված էր մինչև Երիզա քաղաքը: Այս երկրորդ սուլթանին, այսինքն Ղայասէդդին Կայխոսրեվ Բ.ի հաջորդները եղան իր երեք զավակները, որոնք միասնաբար կամ առանձին իշխեցին Սեւջուկյան պետության մեջ: Այս երեք եղբայրներուն անուններն էին Ազդէդդին Կայկաուս Բ., Ռոքնէդդին Ղըլըճ Արսլան Գ. և Ալաէդդին Կայկոբադ Բ., որոնցմե առաջինը՝ սուլթան Ազդէդդին հայոց դեմ հարձակելով պարտվեցավ և ստիպվեցավ հայոց վերադարձնել Իսապրիա գավառն ու Մարաշ, Պեհեստին և Մոնզաս քաղաքները:

Հեթում Ա.ի երկլեզվյան երկու դրամները ընդհանրապես կկրեն հետևյալ զարդերն ու բառերը.

1) ԴՐԱՄ ՀԵԹՈՒՄԻՆ ՈՒ ԱԼԱԷԴԴԻՆԻՆ: Առաջին կողմը կնշմարվի հայոց թագավորը ձի հեծած, որ կարշավե դաշտին մեջ: Գաշտին մեջ կերևին հալ, Աստղ ու Մահիկ: Աջ կողմի շրջանակին վրա գրված են որոշապես՝ «Հեթում քազաուր Հայոց» հայերեն բառերը:

Երկրորդ կողմը կկարդացվին արաբերեն հետևյալ բառերը. «Ասսուրբան էլ մուազզամ Ալաէդդին Կայկոբադ Կայխոսրեվ», որ կթարգմանվի հետևյալ կերպով. «Մեծաշուք սուրբան Ալաէդդին Կայկոբադ, որդի Կայխոսրեվի»:

Այս դրամները թվական չունին:

2) ԴՐԱՄ ՀԵԹՈՒՄԻՆ ՈՒ ՂԱՅԱՍԷԴԴԻՆԻՆ: Առաջին կողմը հայոց թագավորը կերևի ձի հեծած, ու դաշտին մեջ կնշմարվին հալ,

Աստղ կամ Մահիկ: Շուրջը հայերեն գրված է որոշակի՝ «Հեթում քազաուր Հայոց»:

Երկրորդ կողմը կկարդացվին արաբերեն հետևյալ բառերը. «Ասսուրբան ալ ազիմ Կայասէդդինեի վեդդին Կայխոսրեվ իպն Կայխոսրաք»: Ասոր թարգմանությունն է հետևյալը. «Հավատփի և աշխարհի ապավեն՝ գերագույն սուրբան Կայխոսրեվ, որդի Կայկոբադի»:

Այս դրամները թվական կկրեն, որովհետև անոնց վրա արաբերեն գրված են հետևյալ բառերը. «Տպված Սիսի մեջ 637 թվականին» (այսինքն 1239-ին): Ոմանց վրա կկարդացվի կրկին արաբերեն՝ «Տպված Սիսի մեջ 641 թվականին» (այսինքն 1243-ին):

Երկլեզվյան այս զույգ դրամները պատրաստված էին հայ և սելջուկ վեհապետներուն միջև տիրող բարեկամության ու քաղաքական դաշնակցության և ոչ բրբեք իբր մին մյուսին հարկատու կամ գերիշխան թագավոր ըլլալու պատճառով, ինչպես որ սխալմամբ այդպես ենթադրած էին Ադիբ, Սեստինի, Տյու Գանժ, Լը Վայան դը Ֆլորիվան և ուրիշ օտար բանասերներ (տես Կդեմես վ. Սիպիլյանի «Երասավորություն Ռուբինյան դրամոց» գործը):

Իսմայիլ Ղալիբ իր գրած «Սեւջուկյան դրամներու ցուցակ» գործին մեջ (թուրքերեն լեզվով) սխալմամբ կամ դիտումով, Հեթում Ա.ը սելջուկ սուլթաններուն հպատակ կփափագի նշանակել (տես Կ. Յ. Բասմաշյանի «Հայկական ընդհանուր դրամագիտություն» գործը, էջ 126—127):

Ժամանակակից հայ մեծ պատմագետներն Կիրակոս Գանձակեցին, շեշտելով հայոց ու Իգոնիո սելջուկ սուլթանին կնքած բարեկամական դաշինքը, հետևյալ տողերը գրած է (տես § ՃԻԹ). «Իսկ մեծ իշխանն Կոստանդին, իբրև առ զիշխանութիւնն թագատրութեան որդոյ իւրոյ Հեթմոյ, դամենայն հոգս արքայութեան յանձն առեալ, իմաստնաբար կարգաւորէր...: Արար սէր եւ միաբանութիւն ընդ սուլթանին Հոռոմոց, որում անուն էր Ալատին»:

Սուլթան Ալաէդդինի անմիջական հաջորդը եղող սուլթան Ղայասէդդինն ալ, սկիզբները հայոց հետ դաշնակից էր ու բարեկամ: Ասոր ապացույց կրնանք համարել իր ընտանիքը հայոց արքունիքը փոխադրելը: Այս դեպքը տեղի ունեցած էր, երբ թաթարներու Բաշու զորավարը Իգոնիո սուլթանին բանակներուն հաղթելով, գրաված էր Կարին քաղաքը:

Սուլթան Ղայասէդդին երբ իմացավ Կարինի բոցերու մեջ զանվիլը, սարսափահար, Հեթում թագավորին քով ուղարկեց իր մայր-

րը, կինն ու դուստրը և ինք անձամբ փութաց Բաղուն հետապնդելու:

Երկնզվյան այս դրամները սահմանակից տերութիւններուն միջև գոյացած վաճառականութեան մեջ այ մեծ դուրսութիւններ կուտային:

Վաճառականական նպատակներով, ուրիշ երկիրներու մեջ ալ, երկնզվյան դրամներ կոխված էին, ինչպես ռուսերեն ու թաթարերեն լեզուներով, իսկ ուրիշ տեղ մը՝ լատիներեն ու արաբերեն լեզուներով (Սիկիլիո մեջ), առանց կողմերը իրարու հարկատու ըլլալու:

Հայկական ու սելջուկյան թագավորութեանց բարեկամութիւնը վերջ գտավ մեր Հեթում Ա.ի մեկ սխալին պատճառով. Հեթում Ա. ստիպեցավ թաթարներուն հանձնել սուլթանին ընտանիքը...:

Թեպետև թաթարները հետզհետե գորանալով շատ տկարացուցած էին Իգոնիո Սելջուկյան սուլթանութիւնը, և հայերը ուշ կամ կանոփս պիտի ենթարկվէին թաթարներու հովանավորութեան, բայց Հեթում պետք է իր հին պապերեն ժառանգած հայկական վեհ նկարագիրը բարձր պահեր ու թշնամիին չհանձնէր սուլթան Ղայասէղդինի ընտանիքը, որքան ալ թաթարները պնդէին անոր վրա:

Սուլթան Ղայասէղդին, պատերազմի սարսափին ներքև, Հեթումի արքունիքը դրկած էր իր բոլոր ընտանիքը՝ մայրը, կինն ու դուստրը, առ ի սպահովութիւն իր ընտանեկան

պատվին: Ան այս տեսակ վստահութիւն մը պիտի շունենար ուրիշ թագավորի մը վրա, մահմեդական կամ քրիստոնյա:

Հեթում Ա. հաղիվ թե զգաց թաթարական մտանգը, սկսավ երկդիմի, ու թաթարներու Բաշու գորավարին պնդումներուն վրա, հանձնեց Ղայասէղդինի ընտանիքը թաթարներուն:

Այսպես չէին վարված Հեթումն դարեր առաջ Մեծ Հայաստանի վրա թագավորող Արտաշես Ա. ու Տիգրան Մեծ: Առաջինը՝ Արտաշես Ա., Աննիբալ Կարկեղոնացին պաշտպանած էր իր արքունիքին մեջ ու զինքը եղբոր նման խնամած (Ձ-րդ դ. Բ. Ա.), բնավ նկատի չառնելով Հռոմի հալանակար մտանգը: Իսկ Տիգրան Մեծը՝ Միհրդատ Լվպատորը չէր հանձնած Լուկուլլոսին, հակառակ որ այդ բիրտ հռոմայեցին կրկնակիորեն կպնդեր ու պատերազմ կսպառնար հայկական թագավորութեան դեմ: Մինչդեռ Հեթում Ա. հեշտ կերպով հանձնեց թշնամիին իրեն վստահված անձերն ու եղծանեց հայկական դարավոր վեհ նկարագիրը:

Տարիներ վերջ, Հեթում Ա. անդրադարձած կերևի իր այդ մեծ սխալին վրա, որովհետև Մատթեոս Ուտայեցին կրսե թե, Հեթում իր վիշտը հետագային կարտահայտեր հետևյալ բաներով. «Լաւ էր ինձ եթէ գորդի իմ խրնդրեալ էր նոցա քան թէ զնոսա՝ որք յիսն սպաւինեցան...»:

